


16

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԳԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԳԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակոյի Եարաք օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրահարակուած գրաքիւնը ետ յսրմիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

—0—

Անցած կիրակի օրը տեղացի բա-
րեւոր ազգային մը իր վաղաճակի որդ-
ւոյն հոգւոյն համար հիւանդանոցի պա-
տուարելոց մէկ ոչխար և 30 քիլո հաց
բաշխել տուաւ ձեռամբ տեղւոյս Աղբա-
տարնաւի:

—0—

Մեծ. Տօքթ. Թահմիզեանի հիւան-
դութեանը պատճառաւ Մեծ. Տօքթ. Ե.
Թովմասեան յանձն առած է ձրիաբար
դարմանել Աղբատարնաւի կողմէ իւր
բնակարանը զսկուած հիւանդները:

—0—

Կը լսենք թէ բարեւոր ազգային
մը Մեծ. Տօքթ. Կ. Յովսէփեանի բարի
օրինակին հետեւելով մտադիր է 50 կառք
փայտ նուիրել հիւանդանոցի պատասխա-
րելոց:

ՀՐԱՎԻՐ

Սիւ. Ընթերցութեան (ընթերցաշա-
նի) առժամայն գործադիր ժողովն իր
դիւանը կազմած ըլլալով, այսօրու ընէ

կը սկսի նոր բաժանորդագրութիւննե-
րուն: Կը յուանք որ մեր պատուարժան
ազգայիները իրենց աջակցութիւնը
բարոյական և նիւթական չը պիտի խը-
նայեն և մեզի հետ մեկտեղ պիտի աշ-
խատին ընթերցութեան այս նոր շրջանին
համար: Նախորդ վարչութեան հաշիւ-
ները առած ենք և քիչ օրէն պիտի
ժանթագներնք ժողովրդին լրագրաց
մըջոցով:

Ի դիմաց Առժ. Վարչութեան
Ատենադպիր Ատենապետ
Շ. Սիւքիասեան Վ. Մանուէլեան

Ծանթ. — Ընթերցարանը իրիկունները
մինչեւ ժամը 9 բաց է:

—0—

Հարանիքներու երբեմն ներկայ դըտ-
նուող գաղթական քահանային կառավար-
կենք որ այսուհետեւ քիչ մը չափ դնէ
իր խմելք օղիին կամ գինիին, որպէս-
զի հանգիստականներու կողմէ բամբա-
տանքի չենթարկուի և արդէն ըստ
Ընդհանրաշանի կրօնական մը 3 դատա-
թէ առեւի ըմպելիք չի կրնար առնել,
այն ալ միմիայն աշի առնն:

ՅՈՒՅԱՄԱՆՈՒԹԻՒՆ

Ժամանակէ մը ի վեր կը տեսնենք որ գաղթականութեան ոչ միայն բարեկեցիկ մասը, այլ և միջին դասակարգը սկսած է տեղական սովորութեան մը համաձայն մեղեքները նուազախմբով վերցնելու ցուցամուտիւնը ունենալ: Ասիկայ մեզի գարնանքով խառն ցաւ կը պատճառէ, վառն զի, երբ մեր շուրջը կը տեսնենք թշուառութեան և անօթութեան բազմաթիւ պատկերներ, որոնք մաշուած աղիքները կը գալարեն, չենք կրնար երեակայել որ հայ գաղթականներ՝ այս արցունքներու և ողբերու համատարած տեսարանին առջև մեռելական թափօրը հարսանեկան թափօրի վերածելու չափ անգութ ըլլան և այսպէս իրենց վրայ հրաւիրեն թէ տեղացի հայերուն և թէ օտարներուն արդար գայրոյթն ու ծիծաղը:

Մենք կը կարծենք որ մեր գաղթական եղբայրները նուազախմբին սահմանուած դամբը եթէ նուիրեն այս չքաւորութեան ու թշուառութեան ըստ պեղանի ըլլալու, սրտաբոխ օրհնութիւններու և շնորհակալութիւններու լարժանանան, որ անշուշտ նուազարանի ձայնէ աւելի հաճելի է զգայուն սրբտերու:

ԵՐԿՈՒ ՊԱՆԿԵՏ (՝) ՕՐԻՈՐԴՆԵՐ

Անցեալ կիրակի Գեր. Տ. Ծ. Վ. Վեհապետի Եկեղեցւոյ բեմէն յորդոր կը կարդար Հայ գաղթականներուն, մանաւանդ իգական սեռին որ զգուշանան օտար ազգերու առջև ծաղր ու ծանակ ըլլալէ: Սոյն քարոզին ներկայ գտնուող երկու օրիորդներ՝ նոյն օրը իրիկուան դէմ Երլորդ թապիաի կողմերը կը դեղերէին, ուր քիչ մը վերջը կը հասնի Պուլիար երիտասարդ մը ու զոհոնք առ-

նելով կը տանի հաճի Բանարօի կողմը Պուլիարի մը հարսնիքը: Հոն օրիորդները բարձրաձայն խնդուկներով ու անհամ կատակաբանութեամբ տաղտուկ կը պատճառեն ներկայից, որոնք կը ս'սին պարտաւել ու բամբասել հայերը:

Վերջին անգամ ըլլալով մենք ալ կը յորդորենք այդ օրիորդները որ չերկրորդեն իրենց այսպանելի ալարքը, հակառակ պարագային մէջ յա՛կանէ անուանէ ի կարգ պիտի հրաւիրենք զիրենք:

— 0 —

Սօֆիայ: կը գրեն թէ տեղւոյն նախակրթարանը վերաբացուեր է և ի նպատակ անոր՝ Թալ. խորհրդոյ նախաձեռնութեամբ Փ. Պոլսոյ կրթ. սօ՛՛՛ր աշխարհոյ օժանդակութեանը գիմնաւորի՝ քիչ ատենուան մէջ 533 ֆրանքի գումար մը հանգանակուեր է:

Ալեկեան—Պապական Հայ Թատերական խումբը երէկ Քէօթէնճէէն հաս հասաւ և վաղուընէ պիտի սկսի շարք մը ներկայացումներու:

ԲԱՐԻՉԻ ԽՈՀԱՐԱՐԻ

Փարիզի պանդոկներու մէջ աշխատող խոհարարը կը պահանջեն որ՝ շաբաթը օր մը չաշխատին, հանգիստ առնեն, այս պահանջման սկսեր են մասնակցիլ տուներու մէջ աշխատող խոհարարներն ալ: Փարիզեան լրագիրք՝ խոհարարաց այս միտքանութիւնը ծանուցանելու առթիւ կը գիտեն թէ՛ ժողովուրդն արդեօք շաբաթը օր մը 24 ժամ անօթի մնալու պիտի դատապարտուի:

ՔԱՇԱՐԱՆ ԵՐԱԳԵԾ

Սոյն ճաշարանը այս անգամ Տիար Գեորգ Փափազեանի տնօրէնութեանը յանձնուած է, ուր ըստ առաջնոյն կը գտնուին համագամ կերակուրներ: Պատուարժան յաճախող խիստ գոհ պիտի մնան թէ կերակուրներէն և թէ զիններու անմրցելի աժանութենէն:

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

ՏԳԻՂ ՊԼՏԿԵՐՆԵՐ

(Ծար. եւ Վերջ.)

— Բարեկ հանրմ.

— Աստուծոյ բարին.

— Իմացոյ որ 200 օսկի թրախոմայով ֆիլանձային աղջիկը մէկ հատիկիդ պիտի տանես եղեր. իրեք հատ ձիվաններուս խերը չի տեսնամ. (սուտ է, զաւակ չունի) հրախը նետելով՝ չայիր չայիր պիտի երես զաւակդ: Ես ան աղջկան պապներին հալը տեսայ, չամ թախթասի կը նմանի. քիթէն բռնես հոգին կեւլէ, հիչ քեզի կէօրէ բան չէ:

Երիտասարդին մայրը — Աստուած ինտոր կուզէ նէ անանկ ընէ. խըսմէթը ինչ է նէ ան կըլլայ:

— Ազէկ կըսես կոր ամա, Աստուած մարդուս խելք է տուեր, ես ֆիլանձայենք կը ծանշնամ, (իրեն 3 օսկի խոստացողները) անանկ անման անաշէն երկու աղջիկներ ունին ըի՛ հաղարներ կարծեն. ան 200 լիրա տուողը հիչ է քովերնին. աղջիկնիս սաթթ մը առաջ կարգենք ըսելով հալխուն բազիքաներուն առջեւները սլքատցողներէն չեն, աղբորութանուն ուշարը չի կայ. իլլէ մինծին տասը մատնիքէն քսան թիւրլիւ հիւնէր կը կաթէ. էյէր զաւակիդ աղէկութիւն մը պիտի ընես նէ՛ աս աղջիկներէն մէկը ա՛ռ. փարա չունին ամա՛ ծանր ճէհէղ կրնան շինել, ըռեակ կուտան, հէմ էթինէ տօղուն աղջիկ մըն է. ավուճիդ մէջը կը մեծնայ. ո՛ւր քաշես նէ հոն կուգայ. քա՛ ծանրմ ինտօր ըսեմ, մէկ հատիկիդ բերնին լոխման է:

— Խըսմէթը ինչ է նէ ան կըլլայ:

— Հիմա հրամանքդ ե՞րբ խօսք կուտաս աղջիկտես գալու:

— Հիմակու հիմա չեմ կրնար խօսք տալ, չիւնքիւ աս առտուընէ պէրի տուն

ութիննձի խըլավուղն ես քի վրաս կուգաս կոր. ես արթըլս յոգնեցայ, տեղէս չպիտի երերամ ըսելով՝ կինը կը ճամբէ, որ շունչը շիտակ աղջիկան տունը առնելով՝ կը սկսի երիտասարդը զորս դու պատուիրեցեր աւերել: Այս պարտականութիւնն ալ կատարելէ ետք՝ իրեն երեք օսկի խոստացոց ընտանիքին տունը կերթայ, ու թէեւ «Աս գործը լըմնցաւ. տղուն մարը խօսք տուաւ մէկ երկու օրէն աղջիկտես պիտի գան, խօսք—կայն ալ հետ պիտի բերեն. ր ըսելով կաշխատի խոստացեալ երեք օսկիին դոնէ մէկը բրցունելու բայց ՚ի զուր. բստ որում աղջկան մայրը կըսէ.

— Տահա ֆօլ—եօգ եռմուրթա եօգ. խօսք—կապը բերեւնուն պէս իրեք օսկիդ կրնաս առնել. երէկուընէ հաղըր ըրեր՝ տօլապիս լաթին տակը դրեր պահէր եմ:

Ասոր վրայ խըլավուղ խաթունը խաբաթման շտիելով՝ իր տունը կերթայ:


Նոյն իրիկունը երբ երիտասարդը տուն կը վերադառնայ՝ մայրը կը պատմէ անոր առտուընէ մինչեւ իրիկուն խըլավուղ կնիկներուն ձեռքէն քաշածը: Տղան բանի մը վայրկեան ձեռքը ճակտին դրած մտածելէն ետքը կը հասկնայ. որ կնիկներուն ձեռքը խաղալիք եղած է, որոնք զինքը իրտրու ձեռքէ կը բաշեն, եւ այս պատճառաւ օրը 8—10 խըլավուղ կնիկներու թէ՛ իր գործատեղին եւ թէ՛ բնակարանը երթալ գալերնուն վերջը չպիտի գայ, հետեւեալ օրը իր դէմը ելլող պարկեշտ աղջկան մը խօսք—կապը կուտայ՝ առանց դրամօժիտի, ՚ի մեծցաւ մէկ քանի մայրերու:

Այս ճշգրիտ նկարագիրը ընելով՝ սա կուպենք հասկցնել թէ, մեր բարեկեցիկ դասուն պատկանող տիկնանց մէջ ալ (քիչ բացառութեամբ) աղտոտ բարքեր շատ կը գտնուին:

Բոժ. — Մենք ալ սա առածը կը յիշենք. «Բի՛մ եէտի բի՛մ թարատը, սէօհպէթ բիմէ՞ եարատը»:

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ)

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ Ի Կ. ՊԼՈՒՍ)



ԳԼՈՒԽ Թ.

ՈՐՈՇՈՒՄ

Պատրիկ նոյն իրիկունը բարեկամ Իւս-
կիւտարցիի մը միջոցաւ երկտող մը զրկեց իր
մօրը, ծանուցանելով որ կարեւոր գործի մը
պատճառաւ պարտաւորուած էր գիշերը իւր
տիրոջ տունը անցունել. հետեւաբար սոյն
բացակայութենէն մայրը մտահոգ ըլլալու
չէր, այս պարտականութիւնը կատարելէ ետքը
Միհրան աղաի հետ իրիկուան վերջին շոգե-
նաւով Պոյաճի գիւղ գնաց:

Միհրան աղա՝ թէև առաջին վայրկեա-
նէն Աստիւր աղաի Բուրմինէի մասին ըրած
առաջարկը անընդունելի դատած էր, բայց
վաճառատան սպառնացող վտանգին ծանրու-
թիւնը աչքի առջև բերելով, առաջարկէր էր
Պատրիկի որ նոյն գիշերը իրենց տունը ան-
ցունելով, կացութիւնը անգամ մը տիկին
Միհրանի ալ պարզեն, որով թերեւս ճար մը
կարենան գտնել:

Ճաշէն վերջը տիկինը, Միհրան աղան
և Պատրիկ սենկակ մը առանձնացան:

Պատրիկ նախ եւ առաջ վաճառատան
ունեցած նոյն օրուան վիճակը պարզելով,
անպատճառ փոխառութեան մը կարօտ ըլ-
լալին փաստաբանեց, որուն տիկինը համո-
զուեցաւ, յետոյ, Աստիւր աղաի կողմէ եղած
առաջարկը իմացուց:

— Բայց անկարելի՛ է այդ բանը. ա-
տանկ առաջարկ մը չենք կրնար ընդունիլ,
գոչեց տիկինը տեղէն ցատկելով, թող թէ
հիմակ Բուրմինէ նշանուած կը համարուի
Լեոնին հետ, բայց եթէ չըլլար ալ՝ ամե-
նին չպիտի հաւանէի աղջիկս 45 տարեկան
այրիի մը հետ ամուսնացնելու:

— Այդ մասին ես ալ համամիտ եմ

ձեզի, տիկին, պատասխանեց Միհրան աղա,
գիտնալով որ քիչ օրէն Լեոնին ու Բուրմի-
նէի նշանադրութիւնը պիտի ընենք:

— Անանկ չէ՞ մի...

— Այսու ամենայնիւ, եթէ այս ան-
կարելիութիւնը Աստիւր աղաին իմացնենք,
խոստացած 100 ոսկիի փոխառութենէն պի-
տի հրաժարի, ըսաւ Պատրիկ միշտ մտազբաւ:

— Ի՞նչ ընենք, պոռաց տիկինը խոժո-
ռաձայն, այդ դրամը ուրիշ տեղէ մը չէ՞ք
կրնար գտնել:

— Եթէ կարելի ըլլար, ձեզի չէինք
հարցնէր:

— Բայց անկարելի՛ է այդ բանը:

— Այն ատեն մեր վաճառատունն ալ
պիտի պարտաւորի անանկութիւն մ'ալ հրա-
տարակել:

Պատրիկի այս վերջին խօսքերէն տիկի-
նը սարսափաց ու վտանգին ծանրութիւնը աչ-
քի առջև բերելով սկսաւ մտածել:

— Ո՛հ, ի՞նչ աղէկ պիտի ըլլար ըսաւ
Միհրան աղա, եթէ այդ մարդը Բուրմինէն
տեսած չըլլար. թերեւս այն ատեն 100ին
7—8 տոկոսով յաջողէինք պէտք եղած փո-
խառութիւնը ընել իրմէ:

— Աղէկ միտքս եկաւ, պատասխանեց
տիկինը. այդ մարդը ո՞ր տեսեր է Բուրմի-
նէն:

— Կը յիշէ՞ք, օգափոխութեան գալու-
տուննիս օր մը մեր վաճառատունը եկած
էիք:

— Այո:

— Ահա այն օրը տեսեր ու հաւանք է:

— Այն օրը Բուրմինէն հետերնիս
էր:

— Հետերնիդ եղած ըլլալու է. Ակըն-
ցին անոր երկայնահասակ ըլլալը գիտնալուն՝
սէվլի պղլի հանում անունը կուտայ կոր:

— Բուրմինէի անունը տուա՞ւ:

— Ո՛չ:

— Թերեւս քրոջս համար ըսած ըլլայի,
ան ալ Բուրմինէին պէս երկայնահասակ է,
եւ այն օրը հետերնիս էր:

Տիկին Միհրանի այս վերջին խօսքերէն նոր լոյս մը ծագեցուց Պատրիկի մտքին մէջ, որ քանի մը վայրկեան ձեռքը ձախտին դրած մտածելէ ետքը, վստահութեամբ ըսաւ.

— Մենք պիտի կարենանք 100 սկիի փոխաւորութիւնն ընել Աստիւր աղան, աւանց Բուրմինէն իրեն տալու:

Տիկինը ուրախութեան ճիշ մը արձակեց:

— Ի՞նչպէս, հարցուց Միհրան աղա զարմանքով:

— Եթէ սակայն օրիորդը բարեհաճի մեր ըսելիքներուն հետեւիլ թիշ մը ժամանակ:

— Ի՞նչ պիտի ըսէք:

— Նախ եւ առաջ Ակնցիին պիտի խոստանանք օրիորդին ձեռքը, որպէսզի փոխաւորութիւնը ընելով վաճառատան գործը կարգադրենք. եւ որովհետեւ այդ մարդը համոզելու համար Պատրնարարանի միջոցաւ նշանաւորութիւն մը պէտք է ընել, ուստի Բուրմինէն Լեոնի եւ Սրբուհիին Աստիւրի հետ պիտի նշանենք: Ակնցիին ներկայութեանը Բուրմինէին Սրբուհի, Սրբուհիին ալ Բուրմինէ անունը պիտի տանք: Օրիորդ Բուրմինէ Աստիւր աղան հոս եկած ատենը պարտաւոր է անոր հետ իր նշանածին պէս վարուիլ:

— Այդ բանը կրնայ ընել:

— Իր հօրը վարկը փրկելու համար պէտք է որ ընէ, տիկին, ու երբ 91 օրէն անկէ ըրած փոխաւորութիւննիս հատուցանենք, պատճառաւ մը անոր եւ Սրբուհիին նշանը ետ կընենք, միայն թէ երկու կողմէ եղած ծախքը ըստ օրինի մենք վճարելու ենք:

— Բան մը ըսել չէ այդ, բայց եթէ մարդերնիս հասկնայ որ իրեն խալ մը ըրած ենք...

— Բան մըն ալ չպիտի կրնայ ընել մեզի:

— Իրա՞ն կըսէք:

— Հաւատացէք տիկին:

— Ես կատարելապէս վստահ եմ թէ

Պատրիկ պիտի յաջողի, ըսաւ Միհրան աղա:

— Հնորհակալ եմ, պատասխանեց երիտասարդը, ի նշան Հնորհակալութեան գըլուխը խոնարհեցնելով, յետոյ յարեց, հիմա տիկին, ձեր ընելիքը պիտի ըլլայ խընդիւրը երկու օրիորդներուն պարզել ու յորդորել զիրենք անանկ վարուիլ որ Միհրան աղաի սնանկանալուն առաջըր ատենի: Պէտք է նաեւ գաղտնի պահել այս բանը] միւսիւ Լեոնէն:

— Այո՛, աստիկա մեր ամենեւեւ պարտքն է, միայն թէ բան մը պիտի հարցնեմ ձեզի, չի՞ կրնար ըլլալ որ կիրակի օր մը միւսիւ Լեոնին հոս գտնուած ատենը այդ մարդն ալ մեզի այցելէ:

— Ակնցիք Պոլսեցիներուն պէս սովորութիւն չունին նշանածներնուն տունը յաճախ երթեւեկելու, ու թէոր ատանկ բան մը պատահի, վերջէն եկող նշանածը, ըլլայ Ակնցին կամ Լեոնը, պէտք է ուրիշ սենեակ մը առանցնորդել ու օրիորդը այնտեղ անհամբար է որ ըսելով, ամեն միջոց ի դորդնել զայն ճամբելու համար. անկէց զատ, ես իմ վրաս կտունեմ Աստիւր աղան համոզել որ առանց ինծի օր առաջ իմացնելու այցելութիւն չի տայ ձեզի, նոյն ճորը կըրնանք Լեոնին հոս գալը արգելել:

— Արդէն Լեոնը հիմա 15 օրը անգամ մը սկսած է գալ եւ իրիկուան շուրջնաւով վերադառնալ:

— Լաւ, ուրեմն անոր բացակայ գրտնուած կիրակին կը բերենք Ակնցին, եթէ սակայն փափաքի:

Այս որոշումը տրուելէ ետքը իւրաքանչիւր որ իր ննջասենեակը քաշուեցաւ:

(Շտր)

ՁԵՎՈՅՑ

Առ Պ. Մ. ի Պարկաղ. — Ահա մեր ձիւղի տալիք պատասխանը. «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւատարեցաւ աւանանոց, անբանից եւ նմանեցաւ նոյադ»:

ՔԱՓԷ—ՇԱՆԹԱՆԻ ՄԷՋ

Թէ ի՞նչ ձեւերով Բ.Քափէ—Շանթանի քսակահատուհիները երիտասարդները կը սովորեն .

Օրինակ մը .

Անցեալ իրիկուն երիտասարդ մը Բափէ—Շանթան կերթայ . տիկին—մատմազէլ մը, որ անմիջապէս անոր քովը գացած նըստած էր , սիրային խօսակցութեան տաքցած միջոցին կը հարցնէ .

— Միտի՛ւ, ինծի՞ շատ կը սիրես թէ ձեռքի մատանիդ :

— Ի՞նչ կըսես , պիժուս , բեզի պէս սիրուն հրեշտակի մը քով ի՞նչ արժէք կըրնայ ունենալ այս չնչին մետաղը :

— Արեւմտի ինծի նուիրեցէք այդ մատանին , որպէսզի ձեր խօսքերուն ճշդութեանը հաւատամ , ապա թէ ոչ՝ պիտի ըսեմ որ կը ստէք :

Այս խօսքին վրայ մեր պարօնին բերանը բաց կը փնայ ու պղտիկ չի փնայու համար Յոսիփնոց մատանին կը հանէ անոր մօտը կը դնէ :



Ի Պուրկազ գաղթական հայր մը իր դուկին հետ ստիքիչին խանութը մտնելով .

— Բարի լոյս . պարօն Թագաւոր , շուքօճուղուն սաչլարընը քէսմէրի :

— Պաշ իւստիւնէ հաճի աղա , շիմտի քէսէրիմ , շէջլէ օթուր պագայըմ ետվրում :

— Աւստա Թագաւոր , սէն պիլիբսին տմա՛ շէջլէ լայըղըճա քէս , պ'չիմի օլտուն . չօճուղուն պաշընը քէլ բափայա չէվիրմէյէսին :

— Եօգ տ' ճանըմ , եէնի պիչիմ քէսէճէիմ , տրգասը աչըգ :

— Աման հայրիկ , ես անտեկ եէնի պիչիմ բան չեմ ուղեր , թող գլուխս աղէկ մը կընտէ քի՛ դպրատունը նոր եկող վարժապետը մաղերս քաշելու ըլլայ նէ՛ ձեռքը խայմիշ ըլլայ :

Հարսնիքի մը մէջ . հաստառի ժամանակ

Աղջիկան մայրը՝ փեսին կողմին .

— Ինծի նայեցէք , ան չէ ամա , ես տուալ ուրնէ խալլ ըրած էի.քի պանտա մուղիքայով աղջիկս հարս պիտի տանիք , ո՞ւր է ադ պանտան :

— Ճանըմ մենք ալ շատ ուղեցինք պանտա մը բռնել , բայց . . .

— Սահաթ մը օլտուն թող չալէ երթայ .

— Մենք ալ տտանկ ըսինք , բայց . . .

— Բայց մայց չիյտեմ , ես պանտա կուզեմ , չուվանին վրայ ալիւր չի ցաննեք :

— Ալիւր ցանելու բան չի կայ , սահաթուման մը համար 60 ֆրանք ուղեցին նէ՛ մենք ալ չի բռնեցինք , ասկէց զատ , մուղիգաէ՛ն պիտի հասկցուի որ տուն աղջիկդ կը կարգես կոր , պարապ տեղը ծախք մըն է տսիկայ :

— Չեմ , չեմ , ես պանտա կուզեմ , պանտա կուզեմ :

Պղտիկ՝ տղայ մը — Մայրիկ , հարսին մարը մանտա կուզեմ ըսելով օտք կը կոխէ կոր . մեր տանտէրը 2 կթան մանտա ունի , թող երթան մէկ հատը բերեն , սա կնկան ծանը կտրեն :



Տան մը մէջ

— Քա՛ կնիկ, ինչո՞ւ համար աղջիկը կը լացնէք. կը ծնծէ՞ք կոր ի՞նչ կընէք:

— Քա՞ չէ մեզոյ, անկաճը կը ծակենք կոր տէ շրիացածը ցաւին չզիմանար՝ կուլայ կոր:

— Խենդեցա՞ք ի՞նչ եղար. անկաճը ինչո՞ւ կը ծակէք,

— Տէք ողորմեա, խելքիդ եկաւ, աղջիկ զաւակ է, էլ պէժտէ անկաճը պիտի ծակուի, ետէ՛ւ օղը ո՞ւր կէց կախէ:

— Պէ՛ ճանըմ՝ ատ բրածնիդ ի՞նչ պարազ բան է, թող անկաճը ծակ չըլլայ, վաղը մէկալ օր մեծնայ տէ կարգելու քլլաք նէ հիչ որ չէնէ աղջիկնիս տանելիք մարդուն մեր աղջկանը անկաճները ծակ չունի, մասրաֆին մէկը պակաս կըլլայ, կըսենք, մարդուն խօշին կուգայ տէ ճայմիշ չըլլար:



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՀԵԾԻՍԱԼՈՒ ԴԱՐՄԱՆԸ

«Գաղիկ հիւանդութիւն մըն է հեծկալը, կամ ուրիշ բարբառով «կլիմիկը», սակայն որքան ձանձրալի, անխորթ և ձախորդ բան է ընկերութեան մէջ: «Ստոծանիին սանդական (սլաւոփոսիփ) կձկումն է, կըսեն բժիշկներն, որ յառաջ կը բերէ անկանոն շնչառութիւն մը և շնչողական ներութիւն մը այն ցնցումներով՝ որ ի յայտ կուգան որովայնի և կուրծքի խռոցներու միջեւ:» Գարմանելու կերպերը շատ են, գաւաթ մը ջուր խմել ծանր ծանր, ճնշել ոտամոքսը կամ որովայնը, շփել քունքերն, եւայլն:

Զորաւոր կլիմիկին համար, լաւագոյն միջոցն է ճնշել ստոծանիի ջիղերն՝ որ կը հրամայեն անոր: Տոբթ, փողա ալ ուրիշ եղանակ մը կը ցուցնէ. բթամատին մսուտ մասը ճնշել ճկոյթին դէմ. ճնշումը պէտք է զօրաւոր կերպով ընել եւ երկու ձեռքերուն վրայ միանգամայն: Առաջին ցնցումին եթէ այս միջոցը գործադրուի, յաջողութիւնն աներկբայելի է: Ուրիշ լաւ միջոց մ՝ալ անկէց պրծելու. տարածուիլ տախտակամածին վրայ թեւերը բանալով. շատ հազուադիւս է որ այն գերագոյն միջոցին դիմադրէ կլիմիկը. դժբախտաբար այս եղանակը շատ հաճելի չէ:

ԼՐԻՍԱՆԿԱՐԻՉ

Մարտին Արսլան



4րդ Թաղ, Թիւ 218

Գործիք կատարելագործեալ Գին չափաւոր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲՐԻՆ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական զուարճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ երախտներուն ծառայել նաեւ իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր եւ կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արիւսեւեան տպարան,
2րդ. թաղ, թիւ 1104:

ՄԵԲԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թարս Մոռասեան

Հին նամակատան փողոց, գուլպաի
գործարանին դէմ, թիւ 14:

Այն նորահաստառ ճաշարանին մէջ կը պատրաստուին համադամ կերակուրներ: Պատուարժան յաճախորդք խիստ գոհ պիտի մնան թէ ուտելիքներէն եւ թէ գիներու չափաւորութենէն:

2



ԳՈՒՀԱՆ

ՈՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադցի
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց զբօսալի ժամանցներ տուող սոցի գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով ղիմել եւ ի մը սպրութեան:

Ա Զ Դ

ՄԵԲԵԼԵԱՆ ԴՈՐԾԱՐԱՆ

եւ Չուրասի

(ՓՈԲԼԱՅՐԻՄ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ Լ. Բ. Է. ԲԱՆԶՈՒՓ:

Վառնա Երգ. թաղ. Էլտըղ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու, շինութիւն եւ նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով եւ թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթայ գործիքներ, դրամական գատաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ եւ այլն եւ այլն կը պատրաստուին: Պատ. Գաճախորդ միշտ գոհ մնացած են սոցի գործարանի շինութիւններէն:

ԼՐԲԷՅԻՆ ՅԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵԷՆՏԻ

Գըշ կէճէլէրինէ մախսուս կայէթ կիւլիւնճլի վէ էյլէնճէլի իշպու գօմէտի 32 սահիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէնիճէ վէ լիւանը թիւրքճէ օլարագ Վարնասա թիւթիւնճիւ տիւքքիտիւլարընտա 30 սանթիմ ֆիւթլէ սաթըլմագուտ տըր: Թաշարարտան իսթէյէնլէր հալընը 30 սանթիմլիք բօսթա բուլը զերտէ մուհարրէր նամըմա կէօնտէրմէլի տիրլէր:

Մ. ԽԱԶԻԿԵԱՆ, 2նճի Ուչասթ, 1104

ՎԱՌՆԱ

Պուխտան պէօլլէ սաիր էյլէնճէլի վէ ֆախտէլի գօմէտիլէր տախի բէյտէրբէյ նէշը օուրնաճաղը պէյան օլուներ:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Imprimerie Orientale, Varna.